ՆՈՐՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՈՒՆԸ ԵՎՐԱՍԻՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԹԵՐՋՅԱՆ Ա. Տ.

XXI դարում Եվրոպական Միության առջև ծառացած գլխավոր մարտահրավերներից է սեփական էներգապաշարների սակավությամբ պայմանավորված էներգակիրների արտաքին աղբյուրներից կախվածության շարունակական մեծացումը՝ դրանից բխող սպառնալիքներով և արտաքին ու անվտանգության քաղաքականության գործիքակազմը էներգետիկ անվտանգության ապահովմանը ծառայեցնելու հրամայականներով: Եվրոպական Միությունն աշխարհում առաջինն է էներգետիկ պաշարների ներմուծման և երկրորդը՝ սպառման ծավալներով, որն էապես մեծացնում է էներգետիկ անվտանգության արտաքին չափման՝ կայուն և հուսալի էներգամատակարարման ապահովմանն ուղղված ընդհանուր արտաքին էներգետիկ քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Մտահոգությունների համընդհանուր աճը հանգեցրել է էներգետիկ անվտանգության վերաբերյալ քննարկումների ակտիվացմանը, վերջինիս դիտարկմանը՝ որպես ԵՄ անվտանգության կարևորագույն բաղադրատարր և արտաքին քաղաքականության գերակա նպատակ[1]: Հաշվի առնելով ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականության մեջ և մասնավորապես դրա հարավկովկասյան բաղադրիչում էներգետիկ անվտանգության գործոնի շարունակական աճը՝ գիտավերլուծական շրջանակներում մեծապես կարևորվում է ԵՄ արտաքին էներգետիկ քաղաքականության առանձնահատկությունների և օրինաչափությունների, առկա հիմնահարցերի գիտական վերլուծությունը:*

Մասնագիտական գրականության մեջ, ըստ եվրոպական ինտեգրման առանցքը կազմող երկրների միջև էներգետիկ փոխգործակցության շարժընթացի և արձանագրված տեղաշարժերի, առանձնացվում են ընդհանուր էներգետիկ քաղաքականության ձևավորման հետևյալ փուլերը՝ 1951-1958 թթ., 1959-1972 թթ., 1973-2006 թթ., և 2006 թվականից մինչև օրս[2]:

---

* *Ըստ «Կանաչ գրքի»՝ ԵՄ էներգետիկ անվտանգության ռազմավարական փաստաթղթի, առկա միտումների պահպանման դեպքում 2030 թ.-ից ԵՄ-ը ստիպված կլինի ներկրել էներգակիրների առնվազն 70 տոկոսը, տե՛ս Commission of the European Communities, Green Paper: A European Strategy for Sustainable, Competitive and Secure Energy, COM(2006) 105, 8.III.2006, http://ec.europa.eu/energy/greenpaper-energy/doc/2006 03 08 gpdocument en.pdf*

[1] *Տե՛ս* **Piebalgs A.** *"Oil and Gas Geopolitics", Speech at the Lisbon Energy Forum, 1.X.2007, http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=SPEECH/07/586&format=-HTML&aged=0&language=EN& guiLanguage=en*

[2] **Haghighi S. S.** *"Energy Security: The External Legal Relations of the European Union with Major Oil-and Gas- Supplying Countries", Oxford and Portland, Oregon, 2007, pp. 37-64,*

Նշյալ փուլերից յուրաքանչյուրում ԵՄ անվտանգության քաղաքականության մեջ էներգետիկ անվտանգության դերի արժեվորումն ու մասնավորապես համաեվրոպական ներքին ու արտաքին էներգետիկ քաղաքականության ձևավորման գործընթացում արձանագրված առաջընթացը սերտորեն կապված են եղել էներգետիկ անվտանգությանն սպառնացող ճգնաժամերի և ճգնաժամային իրավիճակների առաջացման հետ, որոնք, ակնհայտ դարձնելով եվրոպական երկրների էներգետիկ անվտանգության խոցելիությունը, դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերի միավորման և նպատակների համադրման գործնական քայլերի են մղել: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը՝ որոշ հեղինակներ ԵՄ էներգետիկ քաղաքականությունը բնորոշում են որպես հակաճգնաժամային քաղաքականություն՝ նկատի ունենալով ճգնաժամերի (նշանակալի էին հատկապես 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմն ու 2006 թ. ռուս-ուկրաինական գազային ճգնաժամը) ազդեցությունը էներգետիկ անվտանգության ընկալումների ձևավորման և էներգետիկ քաղաքականության առաջնահերթությունների որոշակիացման վրա[3]: Ուսումնասիրությունների շնորհիվ կարող ենք վերհանել էներգետիկ անվտանգության ԵՄ ընկալման, դրանից բխող՝ էներգետիկ քաղաքականության նպատակների և խնդիրնե- րի փոխակերպման, էներգետիկ քաղաքականության նորմատիվ, ինստիտուցիոնալ և գործառութային բաղադրիչների կայացման հետևյալ առանձնահատկությունները:

Աղյուսակ 1

Փուլեր	Էներգետիկ անվտանգության հիմնահարցեր	Էներգետիկ քաղաքականության առաջնահերթություն-ներ	Ազգային-պետական և վերազգային գոր-ծակցության հարաբերակ-ցություն	Հիմնական փաստա-թղթեր
1951-1958	Էներգետիկ հա-մակարգում ածխի գերակայություն, ինչն ապահովում էր ԵՄ անդամ եր-կրների էներգե-տիկ ինքնաբա-վությունը	Վերազգային Էներգետիկ գործակցության զարգացում	դասական ինստիտուցիոնալիզմ	Ածխի և պող-պատի եվրո-պական հա-մայնքի 1951թ. Փարիզի պայմանա-գիր,
1959-1972	Էներգետիկ հա-մակարգի փոխա-կերպումներ՝ կապված նավթի և գազի սպառման ծավալների մե	Էներգիա արտադրող երկրների հետ փոխշահավետ գործակցության հաստատմանն		1957 թ. Ատո-մային էներ-գիայի եվրո-պական գոր-ծակալություն

Haghighi S. S. *"Energy Security and the Division of Competences Between the European Community and its Member States" (European Law Journal, Vol. 14, N 4, July 2008, pp. 461-482).*

[3] **Hoogeveen F.** *and* **Perlot W.** *"The EU's Policies of Security of Energy Supply Towards the Middle East and Caspian Region: Major Power Politics?", Perspectives on Global Development and Technology, 6, Leiden, 2007, pp. 485-488.*

	ծացման և, համապատասխանաբար, էներգիայի արտաքին աղբյուրներից կախվածության մեծացման հետ	ուղղված արտաքին էներգետիկ քաղաքականության իրականացում, ատոմային էներգիայի զարգացում		(Եվրատոմ)
1973-1986	էներգամատակարարման անվտանգության՝ որպես էներգետիկ անվտանգության կենտրոնական բաղադրիչի դիտարկում, որի ապահովման համար պետք է հաշվի առնել գործընթացի ինչպես տնտեսական և տեխնիկական, այնպես էլ քաղաքական հիմնախնդիրները	Ներքին և արտաքին էներգետիկ քաղաքականությունների միջև սերտ կապի ապահովում, համաեվրոպական էներգետիկ տարածության (European energy geo-space) ստեղծում և այդ հիմքով միջազգային էներգետիկ հարաբերություններում շուկայական մեխանիզմների կատարելագործում, հուսալիության, կայունության և կանխատեսելիության ապահովում	Անդամ պետությունների վերահսկողության դրամական դրություն	1986թ. Միասնական եվրոպական ակտ, 1992թ. Մաստրիխտի, 1997թ. Ամստերդամի, 2000թ. Նիցցայի, 2009թ. Լիսաբոնի պայմանագրեր
1987-2005	ԵՄ ընդլայնման շնորհիվ էապես մեծացավ կախվածությունը էներգակիրների արտաքին աղբյուրներից, ՌԴ-ն դարձավ ԵՄ գլխավոր էներգամատակարարը	ՌԴ հետ փոխգործակցության միասնական ռեժիմի ստեղծում և էներգետիկ խարտիայի ներդրում, ԵՄ նորմերի և սկզբունքների վրա խարսխված միության մերձակայքում «էներգետիկ հարևանության» ցանցի ստեղծում, աղբյուրների բազմազանեցում		
2006թ.-ից -	ՌԴ էներգետիկ պաշարներից կախվածության շարունակական մեծացման և էներգետիկ փոխգործակցության քաղաքականացման պայմաններում նկատելիորեն մեծացավ ԵՄ ար	Արտաքին էներգետիկ քաղաքականությունում անդամ պետությունների միասնականության ապահովում և ԵՄ դերի մեծացում, ներքին շուկայի կատարելագործում, ինտեգրման խորացում, էներգիայի		

	տաքին և անվտանգության քաղաքականությունում էներգետիկ անվտանգության դերն ու նշանակությունը, որն ընդունված մի շարք փաստաթղթերում սահմանվեց որպես ԵՄ անվտանգության կենտրոնական բաղադրատարր, որի հիմնատարրերն են էներգամատակարարման հուսալիության, էներգետիկ գործակցության կայունության, ինչպես նաև էներգամատակարարման ուղիների և էներգիայի աղբյուրների բազմազանության ապահովումը	աղբյուրների և մատակարարման ուղիների բազմազանեցում, ՌԴ-ից կախվածության նվազեցում և վերջինիս հետ փոխգործակցության վերափոխում, «հարավային գազային միջանցքի» բաղկացուցիչ ծրագրերի իրագործում		

Ինչպես երևում է, թեև 1951 թ. Ածխի պողպատի եվրոպական համայնքի, իսկ այնուհետև Եվրատոմի մասին պայմանագրով վերազգային գործակցություն հաստատելով տվյալ ժամանակահատվածում էներգետիկ համակարգի առանցքային բաղադրիչները հանդիսացող ածխի և ատոմային էներգիայի ոլորտում՝ տեսականորեն դրվեցին էներգետիկ անվտանգության ապահովմանն ուղղված համաեվրոպական, միասնական էներգետիկ քաղաքականության իրականացման երկարաժամկետ հիմքերը, այդուհանդերձ, համակարգի հետագա փոխակերպումները, էներգակիրների արտաքին աղբյուրներից կախվածության մեծացումն ու համապատասխանաբար էներգետիկ անվտանգության տարբեր ընկալումների ձևավորումը հանգեցրեցին, ի հաշիվ ԵՄ անդամ պետությունների իրավասությունների ընդլայնման, արտաքին էներգետիկ քաղաքականությունում ԵՄ դերի նվազեցմանը, և եվրոպական ինտեգրման մի շարք հիմնարար փաստաթղթերում (Մաստրիխտ, Ամստերդամ, Նիցցա, Լիսաբոն) էներգետիկ քաղաքականությունն ամրագրվեց որպես գլխավորապես ԵՄ անդամ պետությունների ինքնիշխան իրավասությունների բաղ

կացուցիչ: Ներկայումս ԵՄ անդամ պետությունների համար էներգետիկ անվտանգության մի շարք ընդհանուր սպառնալիքների առկայության պայմաններում մեծանում է դրանց համարժեքորեն արձագանքելուն ուղղված

միասնական էներգետիկ քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Քննարկումների ակտիվացումը եվրոպական էներգետիկ անվտանգության հիմնահարցերի (էներգետիկ քաղաքականության սուբյեկտներ, ազգային և վերազգային գործակցության հարաբերակցություն, քաղաքականության նպատակներ, միջոցներ և առաջնահերթություններ) վերաբերյալ տեսական ընդհանրացումներ կատարելու, երկու սկզբունքորեն տարբեր՝ նորֆունկցիոնալիստական և միջկառավարական մոտեցումների տարբերակման հիմքեր է ստեղծել: Ուսումնասիրության հետևանքով կարող ենք առանձնացնել մոտեցումների հետևյալ տարբերակիչ գծերը.

– Եթե նորֆունկցիոնալիստական մոտեցումը էներգետիկ քաղաքականության իրականացման գործում կարևորում է ԵՄ դերը՝ ընդգծելով վերազգային գործակցության անհրաժեշտությունն ու համապատասխանաբար արժեվորելով միասնական էներգետիկ քաղաքականությունում արձանագրվող ինստիտուցիոնալ և գործառութային առաջընթացը, ապա միջկառավարական մոտեցումը արտաքին էներգետիկ քաղաքականությունը դիտելով որպես ընդհանուր արտաքին քաղաքականության բաղկացուցիչ, մատնանշում է ԵՄ անդամ պետությունների ինքնիշխան իրավասությունները կրճատելու դժվարությունները: Միջկառավարական մոտեցման տեսաբաններն անիրական են համարում ԵՄ ընդհանուր և արտաքին քաղաքականության օրակարգ էներգետիկ քաղաքականության ներառումը և համոզված են, որ ԵՄ յուրաքանչյուր անդամ պետություն պետք է իրականացնի սեփական էներգետիկ պահանջմունքները բավարարող և էներգետիկ շահերը համարժեքորեն սպասարկող ինքնավար էներգետիկ քաղաքականություն[4]:

– Եթե նորֆունկցիոնալիստական մոտեցման տեսաբանները ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովման գլխավոր միջոցներ են համարում ԵՄ «փափուկ ուժը»՝ եվրոպականացման գործիքներն ու տնտեսական մեխանիզմները, ապա միջկառավարական մոտեցումը ընդգծում է ճգնաժամային և հակաճգնաժամային քաղաքականության գործիքակազմի կատարելագործման կարևորությունն ու ըստ անհրաժեշտության սեփական էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանության համար «հարկադրական դիվանագիտության» (coercive diplomacy) և ռազմական ուժի կիրառումը[5]:

– Եթե նորֆունկցիոնալիստական մոտեցումը հիմնական շեշտը դնում է միասնական էներգետիկ շուկայի ձևավորման անհրաժեշտության վրա՝ համարելով, որ ինտեգրված, ազատական ներքին շուկայի զարգացումը կհանգեցնի համաձայնեցված և արդյունավետ էներգետիկ քաղաքականության ձևավորմանը («ցայտյունի» հայեցակարգ (spillover), ապա

---

[4] **Youngs R.** *"Foreign Policy and Energy Security: Markets, Pipelines and Politics" (Toward a Common European Union Energy Policy: Problems, Progress, and Prospects, Edited by Vicki L. Birchfield and John S. Duffield, PALGRAVE MACMILLAN, 2011, pp.41-58).*

[5] **Luciani G.** *"Security of Supply for Natural Gas Markets: What is it and What is it not?" INDES working paper N 2, March 2004, pp. 2-15.*

միջկառավարական մոտեցումը, ընդգծելով էներգետիկ պաշարների համար աճող պայքարն ու մրցակցությունը, հաջողության հասնելու համար թույլատրելի է համարում խաղի շուկայական կանոններից շեղումն ու ոչ շուկայական, ազատական սկզբունքների կիրառելիությունը[6]:

– Եթե միջկառավարական մոտեցումը, մատնանշելով ընդհանուր, վերազգային էներգետիկ քաղաքականության իրականացման դժվարությունները, նախապատվությունը տալիս է էներգետիկ քաղաքականության պետականակենտրոն մոտեցմանը, ապա նորֆունկցիոնալիստական մոտեցումը կարևորում է տարբեր օրակարգեր ունեցող և տարբեր նպատակներ հետապնդող էներգետիկ քաղաքականության սուբյեկտների բազմազանությունը և ընդգծում համընդգրկուն էներգետիկ քաղաքականության անհրաժեշտությունը, որը չի հանգում միայն էներգամատակարարման ֆիզիկական անվտանգության ապահովմանը՝ հետապնդելով մի շարք այլ նպատակներ (էներգետիկ պաշարների մատչելիություն և աղբյուրների բազմազանություն, ազատ շուկայական մեխանիզմների կատարելագործում և այլն): Ելակետային համարելով «ցայտյունի» հայեցակարգը՝ նորֆունկցիոնալիստական մոտեցումը կարևորում է ԵՄ ներքին էներգետիկ շուկայի գործառնությունը կանոնակարգող նորմերի և սկզբունքների վրա հիմնված և ԵՄ գլխավոր էներգետիկ գործընկերներին ներառող միասնական շուկայի ստեղծումն ու գործակցության միասնական ռեժիմի հաստատումը: Հիմնախնդրի վերաբերյալ սկզբունքորեն այլ մոտեցում է ցուցաբերում միջկառավարական մոտեցումը, որի տեսաբանները թերահավատորեն են վերաբերվում միջազգային և տարածաշրջանային էներգետիկ ռեժիմի ստեղծման հնարավորությանը՝ փոխարենն ընդգծելով էներգիա արտադրող երկրների հետ երկկողմ պայմանագրերի հիմքով գործակցելու նպատակահարմարությունը[7]:

Էներգետիկ անվտանգության հիմնատարրերի և էներգետիկ քաղաքականության ներքին ու արտաքին առաջնահերթությունների վերաբերյալ քննարկումներն էապես ակտիվացան հետսառըպատերազմյան ժամանակահատվածում. մի կողմից ԵՄ ընդլայնումն ու դրա հետևանքով նաև էներգակիրների արտաքին աղբյուրներից կախվածության մեծացումը, մյուս կողմից էներգապաշարներով հարուստ հետխորհրդային տարածության բաղկացուցիչ երկրների հետ նորովի հարաբերվելու և փոխգործակցությունում «խաղի եվրոպական կանոնների» կիրառման անհրաժեշտությունը որոշակիացրեցին արտաքին էներգետիկ քաղաքականության առաջնահերթությունները: Էներգետիկ անվտանգության ապահովման հիմնապայման համարելով ինչպես ԵՄ ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հստակ կանոններով գործառնող էներգետիկ ազատական շուկայի և փոխգործակցության միասնական ռեժիմի

---

[6] **Dannreuther R.** *International Relations Theories: Energy, Minerals and Conflict (POLINARES working paper N 8, September 2010, pp. 3-5).*

[7] **Tekin, Williams P. A.** *Geo-Politics of the Euro-Asia Energy Nexus: The European Union, Russia and Turkey, PALGRAVE MACMILLAN, 2011, p. 60.*

ստեղծումը՝ ԵՄ ջանքերն ուղղվեցին հետխորհրդային տարածությանը ԵՄ «էներգետիկ աշխարհատնտեսական տիրույթ» ներառմանն ու մասնավորապես ՌԴ-ի հետ միասնական շուկայի ստեղծմանը[8]*:*

Չնայած գործադրված ջանքերին, մասնավորապես ՌԴ-ի հետ փոխգործակցությունում եվրոպական «խաղի կանոնների» չկիրառելիությունը որոշակիորեն փոխեցին շուկայական մեխանիզմների ամենազորության մասին եվրոպական պատկերացումները, իսկ ԵՄ–ՌԴ էներգետիկ փոխգործակցության քաղաքականացման հետագա գործընթացներից հետո ստեղծվեց իրավիճակ, երբ գործակցությունը սկսեց բնորոշվել «էներգետիկ պատերազմներ», «դիվերսիֆիկացման մրցավազք» և նմանօրինակ այլ եզրույթներով[9]*:*

Ինչպես ՌԴ-ի հետ փոխգործակցության, այնպես էլ ԵՄ արտաքին էներգետիկ քաղաքականության ուղղությունների որոշակիացման գործում նշանակալի դեր խաղաց 2006 թ. ռուս-ուկրաինական «գազային հակամարտությունը»: Այն ԵՄ արտաքին հարաբերությունների և Եվրոպական հարևանության քաղաքականության նախկին հանձնակատար Բ. Վալդների բնորոշմամբ «սթափեցնող ահազանգ էր, որն ակհայտ դարձրեց ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականության օրակարգում էներգետիկ անվտանգությանն առավել մեծ կարևորություն հատկացնելու անհրաժեշտությունը»[10]*:*

Էներգետիկ անվտանգությունը սահմանելով որպես ԵՄ անվտանգության կենտրոնական բաղադրիչ՝ ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաները կոչ արեցին այն ներառել ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության օրակարգ՝ «էներգետիկ քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում օգտագործել ողջ գործիքակազմը՝ ներառյալ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը, եվրոպական պաշտպանական և անվտանգության քաղաքականությունը»[11]*: Ընդունված փաստաթղթերում և ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններում տրվեց էներգետիկ անվտանգության առավել լայն, ընդգրկուն սահմանում, որը չի ենթադրում միայն էներգամատակարարման ֆիզիկական անվտանգության ապահովում: Ինչպես նշեց ԵՄ էներգետիկայի հարցերով հանձնակատար Ա. Պիեբալգսը, Եվրոպայում տեղի է ունեցել ընկալումների փոխակերպում. «Եթե նախկինում մատակարարման*

---

[8] *Այս առումով մեծ տեղ հատկացվեց 1994 թ. ստորագրված Էներգետիկ խարտիայի պայմանագրին՝ ուղղված միասնական կանոնների և նորմերի հիմքով բազմակողմ էներգետիկ համագործակցության մի շարք կարևոր՝ առևտրի, ներդրումների, տարանցման հարցերի կարգավորմանը:*

[9] **Gratz J.** *Common Rules without Strategy: EU Energy Policy and Russia (Toward a Common European Union Energy Policy: Problems, Progress, and Prospects), Edited by Vicki L. Birchfield and John S. Duffield, PALGRAVE MACMILLAN, 2011, p. 61),* **Morales J.** *"Russia as an Energy Great Power: Consequences for EU Energy Security" ("Energy Security: Visions from Asia and Europe" , Edited by Antonio Marquina, PALGRAVE MACMILLAN, 2008, pp. 24-30).*

[10] **Ferrero B.** *Waldner, "The European Neighbourhood Policy: The EU's Newest Foreign Policy Instrument" (European Foreign Affairs Review, 11(2), 2006, 139-142).*

[11] *Communication from the Commission to the European Council and the European Parliament:An Energy Policy for Europe, Brussels, 10.1.2007 COM(2007) 1 final.http://ec.europa.eu/-energy/energv policy/doc/01 energy policy for europe en.pdf.*

անվտանգության հարցը տեխնիկական խնդիր էր, որը լուծում էին նեղ մասնագետները, ներկայումս էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները ներառված են ԵՄ բոլոր նախարարների (էներգետիկայի, արտաքին հարաբերությունների, ֆինանսների, արդյունաբերության և այլն) աշխատանքային օրակարգ»[12]:

Էներգետիկ անվտանգության վերաբերյալ ծավալված քննարկումների կենտրոնական հարցը դարձավ միասնական արտաքին էներգետիկ քաղաքականության իրականացման խնդիրը: Մատնանշելով մի շարք ընդհանուր սպառնալիքների առկայությունը, որոնք որևէ անդամ պետություն ինքնուրույն ի զորու չէ լուծել, ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաները ընդգծեցին ազգային շահերը համաեվրոպական անվտանգության հրամայականներին ստորադասելու անհրաժեշտությունը՝ առաջնորդվելով «մեկ ձայնով խոսող ԵՄ« սկզբունքով[13]:

ԵՄ էներգետիկ քաղաքականության հիմնական փաստաթղթերում գերակա խնդիր սահմանվեց էներգետիկ քաղաքականության ներքին և արտաքին չափումների միջև սերտ կապի ապահովումը՝ արտաքին էներգետիկ քաղաքականության նպատակների (էներգետիկ աղբյուրների և էներգամատակարարման ուղիների բազմազանեցում, ԵՄ մերձակայքում էներգետիկ հարևանային ցանցի ստեղծում) իրականացման նախապայման համարելով ներքին միասնական և ազատական շուկայի ստեղծումը: Դրա գործունեության կանոնակարգմանն ուղղված նորմերի ու սկզբունքների հիման վրա պետք է խարսխվեին ԵՄ միջազգային էներգետիկ (մասնավորապես ՌԴ-ի հետ) հարաբերությունները: Այդուհանդերձ, հակառակ ԵՄ ներքին շուկայի ազատականացման, գործնականում ազատականացումը ոչ միայն չնպաստեց ՌԴ-ի հետ էներգետիկ փոխգործակցությունում թափանցիկության, կանխատեսելիության, ԵՄ միասնականության ապահովման սկզբունքների կենսագործմանը, այլև ԵՄ էներգետիկ շուկայում ռուսական «Գազպրոմ» ընկերության դիրքերի ամրապնդման բարենպաստ պայմաններ ստեղծեց, որը մի կողմից հաստատեց միջկառավարական մոտեցման էներգետիկ փոխգործակցության մեկնաբանությունները, մյուս կողմից, որոշ հեղինակների բնորոշմամբ, էներգետիկ քաղաքականության եվրոպական և ռուսական ռազմավարություններում ապացուցեց վերջինիս կենսունակությունը[14]:

---

[12] **Piebalgs A.** *Nabucco Pipeline: Searching for Alternative Routes for our Gas Supply, Nabucco Energy Ministerial Conference, 26.06.2006,SPEECH/06/413, http://europa.eu.mt/rapid-/pressReleasesAction.do?reference:=SPEECH/06/413&fonnat^HT ML&aged=0&language=EN-&guiLanguage=en*

[13] **Waldner B. F.** *Opening Speech at the External Energy Policy Conference, Brussels, 20.11. 2006. http://ec.europa.eu/comm/external relations/library/publications/28 towards energv policy.pdf.*

[14] **Fernandez R.** *Nabucco and the Russian Gas Strategy vis-à-vis Europe (Post-Communist Economies, Vol. 23, Number 1, March 2011, pp. 69-85);* **Triantaphyllou D.** *Energy Security and*

Հակառակ Եվրոպական հանձնաժողովի գործադրած էներգետիկ անվտանգության հիմնահարցերը ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն (ԸԱԱՔ) ներառելու և առկա խնդիրներին համաեվրոպական լուծումներ գտնելու մեծ ջանքերին՝ ակնհայտ դարձավ «ազատական մոտեցումների տկարությունն ու դեպի «աշխարհաքաղաքական ռեալիզմ» անցման անհրաժեշտությունը, ինտեգրման հասնելու բարդությունն ու պետականակենտրոն մոտեցման գերակայությունը»[15]: Սա հատկապես դրսևորվեց «հարավային գազային միջանցքի» առանցքային ծրագրի, ԵՄ միասնական էներգետիկ քաղաքականության «խորհրդանիշի»[16] դերին հավակնող ՆԱԲՈՒԿՈ գազատարի իրականացման վերաբերյալ ԵՄ անդամ պետությունների սկզբունքորեն տարբեր դիրքորոշումներում: Երբ Եվրոպական հանձնաժողովն ու ՌԴ-ից մեծ կախվածություն ունեցող ԵՄ անդամ պետությունները (Լեհաստան, Չեխիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Ռումինիա և այլն), ահազանգելով ՌԴ մենաշնորհային դիրքերի ամրապնդման վտանգավորությունը, կոչ արեցին միասնականություն դրսևորել և քաղաքական աջակցություն ցուցաբերել ԵՄ էներգետիկ անվտանգության համար կենսական գազատարին, ՌԴ-ի հետ երկկողմ փոխգործակցության ձևաչափով արդյունավետորեն գործակցող ԵՄ մի շարք անդամ պետություններ (մասնավորապես Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան, Հունաստանը և այլն) ու նրանց ընկերությունները (օրինակ՝ "ENI", "Gaz de France"), համաձայնության գալով ռուսական «Գազպրոմի» հետ, քիչ հետաքրքրություն ցուցաբերեցին ԵՄ ներքին էներգետիկ շուկայի ինտեգրման խորացման և արտաքին էներգետիկ հարաբերություններում ԵՄ անդամ պետությունների միասնականության ապահովման խնդիրների նկատմամբ և նվազ մտահոգություն՝ ԵՄ էներգետիկ շուկայում «Գազպրոմի» «հաղթարշավի» նկատմամբ:

Ակնհայտորեն ԵՄ անդամ պետությունների էներգետիկ անվտանգության տարբեր ընկալումներն էապես նվազեցնում են «մեկ ձայնով խոսող» ԵՄ սկզբունքի իրագործման հնարավորությունը՝ էներգետիկ քաղաքականության (մասնավորապես արտաքին) ուսումնասիրություններում մեծացնելով ոչ այնքան ԵՄ, որքան նրա անդամ պետությունների դիրքորոշումների ուսումնասիրության կարևորությունը:

Օրինաչափորեն վերազգային գործակցության զարգացման և արտաքին էներգետիկ քաղաքականությունում ԵՄ իրավասությունների ընդլայնման օգտին են հանդես գալիս ՌԴ-ից առավել մեծ կախվածություն

Common Foreign and Security Policy (CFSP); The Wider Black Sea Area Context (Southeast European and Black Sea Studies Vol. 7, N 2, June 2007, pp. 289-302).

[15] **Youngs R.** *Foreign Policy and Energy Security: Markets, Pipelines, and Politics (Toward a Common European Union Energy Policy: Problems, Progress, and Prospects, Edited by Vicki L. Birchfield and John S. Duffield, PALGRAVE MACMILLAN, 2011, p. 49).*

[16] *Գազատարն այսպես է բնորոշել նախագծի համակարգող Զ. Վ. Արստենը, տե՛ս* **Youngs R.** *Energy Security: Europe's New Foreign Policy Challenge, Routledge 2009, p. 109.*

ունեցող ԵՄ անդամ պետությունները (մասնավորապես Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան)՝ հանդես գալով ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովման համար «եվրոպական մոտեցումների ցուցաբերման, ազգային շահերը համաեվրոպական անվտանգության հրամայականներից ստորադասելու կոչերով»[17]: Մասնավորապես Լեհաստանը 2006 թ. ճգնաժամից հետո առաջ քաշեց ԵՄ անդամ պետությունների էներգետիկ շահերը պաշտպանող էներգետիկ միության («Էներգետիկ ՆԱՏՕ») ստեղծման գաղափարը, որը, սահմանափակելով էներգետիկ քաղաքականությունում անդամ պետությունների ինքնիշխան իրավասությունները, կոչված էր ապահովելու արտաքին էներգետիկ հարաբերություններում ԵՄ դերի մեծացումը[18]:

Գործադրված ջանքերի տապալմամբ ՌԴ-ից մեծ կախվածությունը որպես լրջագույն սպառնալիք դիտարկող և համապատասխանաբար էներգամատակարարման ուղիների բազմազանեցմանը ձգտող ԵՄ վերոնշյալ անդամ պետությունները գործընթացում առաջընթաց արձանագրելու և մասնավորապես էներգիայի այլընտրանքային պաշարներ ապահովող երկրների (մասնավորապես Ադրբեջանի, Թուրքմենստանի) հետ բանակցություններում առաջընթաց ար- ձանագրելու համար ԵՄ վերազգային կառույցներին կոչ արեցին «էներգետիկ անվտանգության և գործակցության հիմնահարցերը տարանջատել էներգիա արտադրող պետությունների ժողովրդավարացման պահանջներից»[19]:

Կարծում ենք ԵՄ ՀԱԱՔ օրակարգ էներգետիկ անվտանգության խնդիրների ներառման ջանքերի տապալմամբ ստեղծվեց մի վիճակ, երբ էներգետիկ անվտանգության ապահովման հրամայականները սկսեցին սահմանափակող ներգործություն ունենալ ԵՄ ՀԱԱՔ գործիքների կիրառելիության վրա: Սա հատկապես ակնհայտ դարձավ 2006 թ. ճգնաժամից հետո ԵՄ հարավկովկասյան քաղաքականությամբ արձանագրված տեղաշարժերով: Ակնհայտորեն 2006 թվականից սկսած՝ մասնավորապես ԵՄ–Ադրբեջան երկկողմ էներգետիկ գործակցության համաձայնագրերի[*] կնքմամբ էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները նշանակալիորեն տեղափոխվեցին երկկողմ փոխհարաբերությունների ոլորտ՝ երկարաժամկետ հեռանկարում հանգեցնելով էներգետիկ գործակցության նոր՝ ԵՄ ՀԱԱՔ նպատակներից

---

[17] *Саммит "По энергетической безопасности" в Вильнюсе – вызов России?: Литва за неделю, 12.X.2007 http://pda.regnum.ru/news/898740.html. В Кракове завершился неформальный энергетический саммит, 12/05/2007 http://ria.ru/economv/-20070512/65371386.html#ixzz21 fp9kYLN*

[18] **Толстов С.** *Энергетическая безопасность в контексте взаимоотношений Европейского Союза, России, Украины и стран Центральной Азии (Центральная Азия и Кавказ, N 6(48) 2006, с. 18).*

[19] **Youngs R.,** *նշվ. աշխ., էջ 112:*

[*] *Տե՛ս, օրինակ,* Memorandum of Understanding on a Strategic Partnership between the European Union and the Republic of Azerbaijan in the Field of Energy, Brussels, November 2006; Joint Declaration on the Southern Gas Corridor, Baku, January 2011.

և սկզբունքներից մեկուսի օրակարգի ձևավորմանը: Մասնավորապես 2006 թ. սկսած՝ ԵՄ մի շարք անդամ պետությունների (Ավստրիա, Բուլղարիա, Էստոնիա, Իտալիա, Լեհաստան, Լիտվա, Հունաստան, Ռումինիա և այլն) և Ադրբեջանի միջև կնքված էներգետիկ գործակցության երկկողմ պայմանագրերով վերջիններիս միջև էներգետիկ փոխգործակցությունը սկսել է զարգանալ մեկուսի ԵՄ – Ադրբեջան ընդհանուր գործակցությունից, որի անքակտելի բաղադրիչը հանդիսացող, մասնավորապես ժողովրդավարացման ուղղությամբ առաջընթաց ապահովելու Ադրբեջանի պարտավորությունների չկատարումը որևէ կերպ չի խոչընդոտում էներգետիկ փոխգործակցության զարգացմանն ու չի նվազեցնում ԵՄ էներգետիկ անվտանգության քաղաքականությունում Ադրբեջանի ռազմավարական նշանակությունը:*

Ակնհայտ է, որ ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունում էներգետիկ անվտանգության ուսումնասիրությունները կարևոր են ինչպես եվրոպական ինտեգրման խորացման և ՀՍԱՔ զարգացման հնարավոր սահմանները որոշակիացնելու և այդ հիմքով տեսական ընդհանրացումներ կատարելու, այնպես էլ մասնավորապես ԵՄ հարավկովկասյան քաղաքականության առանձնահատկությունները պարզելու համար:

НЕОФУНКЦИОНАЛИСТСКИЕ И МЕЖПРАВИТЕЛЬСТВЕННЫЕ КОНЦЕПЦИИ В ЭНЕРГЕТИЧЕСКОЙ ПОЛИТИКЕ ЕВРОСОЮЗА

ТЕРЗЯН А. Т.

Резюме

Исследования общих закономерностей формирования и развития общеевропейской энергетической политики показывают, что в странах ЕС наметились тенденции, свидетельствующие о нежелании государств идти на дальнейшее углубление интеграции, что и является объектом теоретических обобщений и концептуального анализа процесса с точки зрения лидирующих теорий европейской интеграции – неофункционализма и межправительственного подхода. Перспективы углубления процессов европейской интеграции, а также основные направления южнокавказской политики ЕС следует рассматривать сквозь призму энергетической составляющей общей внешней политики и политики безопасности.

** Մասնավորապես արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության ԵՄ գերագույն հանձնակատար Ք. Էշթոնը հայտարարել է, որ Ադրբեջանը Հարավային Կովկասում ԵՄ ռազմավարական գործընկերն է (տե՛ս* **Ashton C.** *"EU-Azerbaijan relations should suit needs of both", 16.11.2011) http://www.enpi-info.eu/maineast.php?id type=1&id=27060*

THE APPLICABILITY OF THE CONCEPTS OF NEOFUNCTIONALISM AND INTERGOVERNMENTALISM IN THE CONTEXT OF THE EUROPEAN UNION'S ENERGY POLICY

A. TERZYAN

Abstract

During the first decade of the 21st century, energy security has emerged as a key issue on the European foreign and security policy agenda, increasingly perceived by both national governments and European Union institutions as an area of priority concern due to the depletion of intra-EU resources and growing dependence on external energy supplies.

In an attempt to overcome existing gaps between the theories and practice, several relevant issues regarding the evolution, nature, tools and goals, as well as normative, institutional, and functional aspects of the EU's external energy policy have been investigated from the perspective of intergovernmentalist and neo-functionalist approaches. Although EU institutions, chiefly the Commission, tend to enshrine liberal approaches in their various documents, in practice, however, energy security is an area where geopolitical realism has made one of its most spectacular comebacks, thus backing up the key points of intergovernmentalist approach. Despite the EU's reliance on its "soft power" and adherence to the principle of liberal interdependence, over time it became clear that market-based liberal initiatives do not have much room to grow, coming to prove the structural weakness of market mechanisms and the underlying tensions between the priorities of diversification (pipeline politics) and the governance modes of the EU.

The article has put forward a new approach with towards the investigation of the EU's South Caucasian policy and in particular, its energy security dimensions.